

ԲԱԺՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ 50 շ.

25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ

Տարեկ 13 ֆր

վ. համա. 7 "

Ամերիկա

2 Տղ. 30 սենդ

ԿԱՆԻՒԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ

չեն տրուիր:

Ծանուցումներ

մասնաւոր պայ

մաններով:

Հասցէ

DIR AN

PAPAZIAN

ALEXANDRIE

(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 2 ՀԻՆԳՇԱԲԻ 1903

ԹԻԻ 262

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԳ.

«Հայեղի»ի 261 եւ 262րդ թիւերը ընդունող ու զանոնք մեզի չի վերադարձնող անձինք՝ իբր մեր բաժանորդները կ'արձանագրուին:

Աղեքսանդրիոյ մէջ «Հայեղի»ի վաճառման կեդրոնացեալին է՝ Տիար Բարսեղ Թեղալեանի խաւնորը, Շերիմ Բաշա փողոց:

«Հայեղի»ն ձեռքէ կը ծախուի նաեւ Ծրանփողոց Տիար Աշոտ Փաշալեանի մօտ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Հրապարակաւ մեր շնորհակալութիւնը կը յայտնենք քոյր աշն անձերու, որոնք «Հայեղի»ի վերելումին առթիւ իրենց խնդակցութիւնը յայտնեցին: Նոյն շնորհակալութիւնը նաեւ «Փիւնիկ»ի եւ «Լրաբեր»ի Պատ. խմբագրութեանց:

Արսասահմանի մեր Ազնիւ Բաժանորդներուն, Թղթակիցներուն եւ Պաշտօնակիցներուն,

Ուշադրութիւն մեր նոր Հասցէին:

ԱԶԳԱՅԻՆ

Յուլիս 22ին՝ բովանդակ Ռուսաստանի և Տաճկաստանի Հայ եկեղեցիներու մէջ հանդիսաւոր արարողութեամբ կատարուեր է Ս. Էջմիածնայ Տաճարի կառուցման 1600ամեակի յօբելեանը:

—Պոլսոյ Ազգ. Հիւարդանոցի մէկ պաշտօնական ազգէն կը տեղեկանանք թէ՝ ինպատեան ինչ հաստատութեան այս տարի տրուած նուագահանդէսի զուտ հասոյթը եղած է՝ 948 Օսմ. ոսկի և 87 Ղրուշ:

—Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ Տ. Մովսէս Եպիսկ. Կէօմրիւքճեան՝ մայիս 30ին Պօլիս վերադարձեր է:

—Բեդրսպուրկի հիմնարկութեան երկհարկ ընտանիքին ներկայ գտնուելու համար Թիֆլիսի Բաղ. խորհրդին կողմէ իբր պատգամաւոր Բեդրսպուրկ զրկուած են իշխան Երկայնաբազուկ Արզութեան, Պ. Պ. Փարեան և Տիգրանեան:

—Կարինի մէջ կիրակնօրեայ վարժարան մը բացուած է, ուր կը յաճախեն բոլոր անոնք որ կըրնային պատեհութիւն ունեցած չըլլալ կանոնաւորապէս դպրոց երթալու:

ՆԱԾԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աղետասանդրիս 30 Յունիս 1903

... Խմբագիր,

Կը խնդրեմ որ յանուն անկողմնակալութեան հրատարակէք հետեւեալը.

«Արշալոյս, Արտեմիս, Փիւնիկ, Ժողովուրդ, Ազատ Բեմ և Փեթակ. ասոնց մէկ քանիին բաժանորդ եմ, ու վճարող բաժանորդ, մէկ քանիներն ալ ձեռքէ ձախու կտանեմ ու կը կարգամ, եթէ սակայն հրատարակուին. այո՛, եթէ հրատարակուին. որովհետեւ Եգիպտոսի մէջ փորձանքը անպակաս է մեր հայ խմբագիրներուն համար. ոմանց գլխուն կուգայ այս փորձանքը, ոմանց քսակին, ոմանց ալ խելքին. մէյ մըն ալ կը նայիս շաբաթ մը կամ շաբաթներով թերթերին չելլելը. Բանի մը շաբաթէ ի վեր է որ Արշալոյս չեմ առած. Արտեմիսի մարտի 1 թիւը նոր առի, Փիւնիկը խոշոր ծրագիրներու պարունակներ շաղկած՝ մերթ կերեայ, մերթ չերեար Ազատ Բեմ մէկ ձեռքով վերքը կը կապէ և հիւստի ալ պարտք ունեցած թերթերը կը վճարէ, Փեթակն ալ իր բլիշներէն փոխանակ մեզրի՝ արիւն կը կաթեցնէ ու կծիկը կը գնէ.

Երբ մենք, բաժանորդներս, անկանոն կերպով վճարում ընենք, դուք, խմբագիրներդ, զանգատ գանդատի վրայ կը տեղացնէք, ականջնիս կը խուլցնէք. աղէկ, ես չեմ արդարացներ անկանոնութիւնը, բայց կանոնաւորութեան առաջն օրինակն ալ դուք տալու չէք մեզի. թերթի մը հըրատարակութիւնը բարոյական պէտքերէն զատ նիւթական շատ մը պէտքերու ալ կը կարօտի ուրոք թերթին հոգին են. արդ ինչո՞ւ այդ պէտքերը զոնէ բաւական չհոգացած հրատարակ կը նետուիք, խոշոր բաներ երեւակայելով ճամբայ կելլէք, կը կարծէք որ ձեր թերթը առաջին օրէն հարիւրաւորներ ու հազարաւորներ պիտի կարդան, ո՛ւր էր թէ այնպէս ըլլար, սակայն յանկարծ խաբուած ըլլալնիդ կը զգաք, նեղը կը մնաք ու կը սկսիք պատերազմի գաշտին վրայ վառօդը հատած զինուորի պէս կամ փախչել կամ պահուրտիլ. ներեցէք ինձի երբ ըսեմ ձեզ թէ դուք իբր իմաստուն մարդիկ, մեր Ժողովուրդին ընթերցասիրութեան ու վճարելու մասին ունե-

ցած տրամագրութիւնները չափած, ձեռք ըլլալու ու վերջը հրատարակ նետուելու էք. Ձեռքէ այսպէս ընողները ապահով եմ որ կը յաջողին ու յաջողածներ ալ կան.

Ես շատ դրոյց բրոյց մէկը չեմ, բայց ընթերցասէր եմ, ու կը փոփաքիմ ձեռքէս եկածին չափ ալ ազգիս լրագիրները քոշալերիլ. քաղաքիս մէջ ինձի պէս շատեր կան, հաւատացէք, միայն թէ կանոնաւոր կերպով կ'ուզենք մեր թերթերը ստանալ ու կարդալ. ասոր վրայ մտածել ձեր առաջին պարտքը ըլլալու է կարծեմ, եթէ չահեղինիդ լաւ մտածող էք.

Ձեր «Հայելի»-ն ինձի ալ սլափու ըրած էք զրկել, չնորհակալ եմ, ընդունած եմ և Ձեր բաժանորդը եղած. «Հայելի»-ի եօթը տարիէ ի վեր յարատեւ շարունակութիւնը և ձեր մասնաւոր տըպարանին գոյութիւնը անշուշտ մեծ փատահութիւն պիտի ներշնչէ ձեր բաժանորդներուն թէ, ինչպէս ցարդ, այսուհետեւ ալ կանոնաւորապէս պիտի հրատարակէք ձեր թերթը.

Կը յուսամ որ ներողամիտ կը գտնուիք նամակիս ոճին, որովհետեւ, ինչպէս որ ըսի, շատ զըրոյց բրոյց չեմ. կարողութիւն ու յաջողութիւն կը մաղթեմ Ձեզ.

Ձեր նոր բաժանորդներէն մէկը

Ծ. Խ.— Վերագրեալ նամակը իր անկեղծութեանը մէջ շատ օրինաւոր գտնելնուս համար չի վարանեցանք հրատարակելու, սա յուսով որ թելադրական կըլլայ եգիպտոս հրատարակող հայ թերթերու խմբագիրներուն, որպէս զի այսուհետեւ գտնէ իրենց թերթերուն կանոնաւոր հրատարակումով լիովին արժանանան իրենց բաժանորդներուն վստահութեանը.

ԶԱՆԱԶԱՆՔ

Ամերիկացի միլիոնատէր մը՝ 30 միլիոն ֆրանք օժիտով իւր ազնիւ կնութեան տալ ուզեր է Սերպիոյ նորընտիր Թագաւոր, Բէէն Ա. ի

Համպուրկի մէջ քանի մը տարիներէ ի վեր լեղուն բռնուած (համրացած) կին մը՝ անցեալները իր չորս տարեկան զաւկին կառքի մը տակ

մնալով չարաչար վիրաւորուած ըլլալն իմանալուն պէս՝ դէպքին տեղը վազեր է տարապալման յուզմունքով, այս յուզման վրայ . . . լեզուն բացուելով՝ խօսիլ սկսեր է :

Ամբողջ Ռուսիոյ մէջ՝ անցեալ տարի 63 միլիոն 610 հազար բուտ շաքար շինուէր, կէսը երկրին մէջ սպառեր և միւս կէսն ալ առանց մաքսի արտածուեր է :

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Խնայողական լուսցի մը

Ճերմակեղէնները շատ աժան և շատ մաքուր կերպով լուսլ կուզէք :

Առէք 40 կրամ քերէպանքիւն, որուն մէջ լուծելու էք 5 կրամ եսանս սը սել ամօնեագ. Այս խառնուրդը դրէք տաք ջրով դոյլի մը կամ ուէ ամանի մը մէջ և աղէկ մը, ուժով մը հարեցէք (չալխալամիչ ըրէք), յետոյ նոյն ջուրին մէջ լուծեցէք (հալեցուցէք), 150 կրամ օճառ, այս ջուրին մէջ 6 ժամի չափ թրջոց դրէք ճերմակեղէնը, վերջէն լուսցէք աճուելով. պիտի տեսնէք որ շատ գիւրիւն պիտի ըլլայ աս լուսցքը ու ճերմակեղէններն ալ վերջին ծայր պիտի ճերմակնան :

ՆԿԱՐՅԱՆՈՒԿ



—Ո՛հ, ձախ ձեռքս՝ կորուսի, ուր կրնամ գտնել,

ԽԱՐԵՍԻՈՒԲԵՍԱԿԱՆ

Ա Ձ Դ

ԹԱՏՐՈՆ ԵՐԵՒԱԿԱՅԱԿԱՆ

2903 Յունիս 37 Շաքաք գիշեր ժամ 9ին

Արտաքոյ կարգի սուտ երեկոյթ

Կաղմակերպութեամբ և ի նպաստ
Միւսիւ Բաթարուֆի.

Առաջին անգամ ներկայանալի

ՄՈՒԳԱՎԱ ՔԷՕԲԻԻ ԺԻՆԱՅԷԹԻ

և խօստ

ՃԱՄՍԸԶ ՉԷՐՉԻՎԷ

Տէօրթ բէրտէ

ԺՈՂՈՎՈՒՄ՝ ՈՒՅԳՈՒՏԱ

դօմէտի 1 բէրտէ

Ոչ-կանոնաւոր երաժշտաց խումբ մը պ. Ասըլբօգեանի առաջնորդութեամբ զոռոնաի կը տորներ պիտի զարնէ . . . քիթին մէջ :

ԱՁԴ : — Տոմսակները այսօրու ընէ վաճառուելով, մէկ մասը դանձուելէ ետքը ներկայացումը պիտի . . . չի տրուի, ի փառս և ի պարծանս առաւ-փախաւութեան : Կը յուսանք թէ թատերասէր հասարակութիւնը որ նոյն գիշերը մինչեւ թատրոն դալէն ետքը յուսախաբ պիտի մեկնի, այլեւ պիտի բարեհաճի ուրիշ անգամներ մեզնր ման շարլաթաններէ չխաբուիլ : ԶՈՒՈՆԱՃԻՕՅ

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

Մէնչիյէ

Կարգ մը խոհական անձինք նկատելով որ կրնան գտնուիլ առաւ-փախաւներ, որոնք թատերական ներկայացումներ տալու պատրուակաւ ժողովուրդէն դրամ կը շորթեն, որոշեցին այսուհետեւ առանց երաշխաւորի կամ կաղմակերպեալ թատերախմբի մը պէտին ոտորագրութեամբը հրապարակ հանուելիք թատերական ծանուցումներուն ու տոմսակներուն ամենեւին կարևորութիւն չի տալ :

Փաշայկ

Բոժոժիկ. — Պապօ, այս միջոցով պ. խաբէս-խո բէսները ալ չի պիտի կրնան յանդգնիլ գըլուխին դուրս հանել . . . սաղանկեօզի պէս :

ԴՐԱՆ ԶԱՆԳԱԿԸ

Քանի մը ամուրիներ մէկտեղ նստած՝ ամուրիութեան վրայ կը խօսակցէին։ Անոնցմէ մէկը՝ Մարթէն, որ սակաւախօս ու ծանրաբարոյ անձ մըն էր՝ այս խօսակցութենէն ազդուելով, ըսաւ։

«— Ես ալ ձեզի պատմեմ իմ ամուրի մնալու պատճառը։ Դիտէք թէ չափազանց ամօթխած մարդ մ'եմ։ Թէեւ հիմա տարիքիս հետ քիչ մը թեթեւացած է այդ վիճակը, սակայն առաջները զարմանալի մարդ մըն էի։ Երբ 20 տարու էի, երբ այլեւս կեանքի ասպարէզը մտնելու հասակին մէջ կը գտնուէի, սրահ մը մտած ատենս ծուռկերս կը դողային ու աչքերս կը մթագնէին։ Ո՛չ միայն սրահ, այլ և հանրակառք մտնելու ատենս անգամ կը նեղուէի նստողներէն։ Կը շառագուռէի, կը յուզուէի, անպատճառ մէկուն ոտքին կը կոխէի կամ մէկու մը կը զարնուէի։ Ո՛հ, այս վիճակս զիս ծողու առարկայ ըրած էր։ Այսու ամենայնիւ, չափազանցօրէն կ'զգայի սիրել ու սիրուիլ։ Անբացատրելի էին սրտիս այս զգացումները։

«1890ի փետրվարի 16ին, ժամը 3ին, հորաքրոջս բարեկամներէն մէկուն՝ Գորթուվա անուն տիկնոջ պիտի այցելէի։ Հօրաքոյրս կ'ուղէր որ ամուսնանամ սոյն տիկնոջ էօթէնի անուն աղջիկանը՝ հետ, ապահովցնելով թէ երջանիկ պիտի ըլլամ։ Վերջապէս, հօրաքրոջս յաւառ պնդումներուն վրայ որոշեցի ամուսնանալ նոյն օրիորդին հետ։ Ու թէպէտ հօրաքոյրս իմ վրաս ծանօթութիւն տուած էր անոնց, բայց անպատճառ պէտք էր անձամբ երթալ ուզել ձեռքը։ Ուստի կամայ ակամայ ելայ, սեւ ընտինկօթ հագայ, ամօթիւնեցայ։ Մաքուր օձիք մը ու գեղեցիկ վըզնոց մը դրի, զոյգ մը բաց-գոյն ձեռնոց գնեցի ու ճամբայ ելայ։ Օրիորդ էօթէնին երեւակայութեանս մէջ այնպէս գրեցի, այնպէս նկարեցի որ չպիտի կրնայի ապրիլ՝ եթէ չամուսնանայի անոր հետ և այս երեւակայութեամբ կրցայ վարել տանիլ զիս մինչև անոնց բնակավայրը։ Սանդուղներէն ելայ գինովի մը պէս աստանդելով, ու զռնապանին ծանօթութեանը համաձայն կեցայ երրորդ յարկի 4րդ դրանը առջև։ Ահա զանգակը, եթէ քաշեմ... բայց համարձակու-

թիւն պէտք է... ո՛հ, ինչե՛ր չխօսեցայ զիս քաջալերելու համար, ինչե՛ր չխորհեցայ։ Այլ սակայն կարելի չէր... ձեռքս շարժելու անգամ կարողութիւն չունէի։ Գոյնս նետած, օձիքը վզիս պլլուած, քրտինքով ողողուած, սրտիս յուզմունքէն ոտքի վրայ կենալու անկարող։ Ի՞նչպէս կըլլայ, ի՞նչ պիտի ըսեն երբ տեսնեն զիս...։

«Քիչ մը սպասեմ ու ինքզինքս ամփոփելէ ետքը զանգակը քաշեմ, ըսի։ Ուստի հոն՝ պատին կըթնած կեցայ։ Թաշկինակս խխուժեցած էր ճակտիս քրտինքովը ու կուրծքս փութի պէս արագ ելեւջներ կընէր։ Քիչ ժամանակ կար ժամը 3ին։ Գարձեալ զանգակին մօտեցայ։ Այլ զօրութիւն մը կ'զգայի զայն հնչեցնելու։ Մազ մնացեր էր կոճակին դպչելուս երբ յանկարծ ձայն մը։

— Կեցէ՛ք, մի՛ աճապարէք, ըսաւ։

Ու վարի կողմէն ալ ոտնաձայն մը լսեցի։ Հաշիւ 20 տարեկան, երկայնահասակ, դեղնագոյն և գեղանի տիկին մը վեր կելէր, քովս վազելով ըսաւ։

— Ո՛հ, պարոն կ'աղաչեմ, աղատեցէ՛ք զիս։ ձեր դէմքէն ու կերպարանքէն կը գուշակուի թէ ամենալաւ մարդ մըն էք։ Ո՛հ պարոն, պաշտպանեցէ՛ք։ Գինով ու այլանդակ մարդ մը ժամէ մը ի վեր զիս կը հալածէ։ Անոր ձեռքէն աղատելու համար հոս վազեցի, հիմա ուր որ է կուգայ։

«Հաղիւ թէ տիկինը քովս կեցաւ, ահա սանդուղէն վեր ելաւ խիստ դէր և դէմքն ու կերպարանքը՝ արտառուց մարդ մը։ Բայց զիս տեսնելուն պէս դեղնեցաւ, փափկութեամբ բարեւելով շուրջը նայեցաւ, և որպէս թէ փնտռած տեղը կորսնցուցած ու մոլորած ըլլար, գլուխը շարժելով իջաւ գնաց։

«Տեսնելու բան էր գեղանի կնոջ խնդութիւնը։ չէր գիտեր թէ ի՞նչպէս շնորհակալութիւն յայտնէ ինձ։ Երկու ձեռքերովը իմ ձեռքերուս փարեցաւ ու սիրուն աչքերուն ամենազգեցիկ նայուածքովը հասկցուց թէ՛ յատ գոհ պիտի մնայ իմ այցելութենէս։

«Այսչափ հրաշագեղ կին մը պաշտպանելու մեծ հաճոյք պատճառեց ինձի։ Երբ քովէս նահեռացաւ, ժամացոյցին նայեցայ։ Յը 10ը կանցնէր, մինչդեռ ես կը կարծէի թէ 3 վայրկեանի մէջ պատահեցաւ այս դէպքը։ Իսկոյն վազեցի

զանգակին քով • կոճակին դպչելու համար ձեռքըս երկնցուցած ատենս՝ ներսէն շատ մը ձայներ եկան ականջիս • իմ անունս կուտային • մտիկ ըրի • Օրիորդ Էօթէնի կը գոչէր ու կը գոռար այսպէս •

— Մամա՛, տակաւին ո՞րչափ ատեն պիտի ըսպասեմ • ես խօսք տուած եմ՝ պտոյտի ելնելու • պարապ տեղը չեմ սպասեր • արդէն վերահասու եղած եմ այդ պարսն Մարթէնի որչափ տխմար մէկը ըլլալուն • երբ տեսայ զինքը, շոշորդ, անպիտան մը • բայց ես չեմ ուզեր, եթէ երբէք դայ, դարձեալ չեմ ուզեր, կը հասկնամք . . . ահա ես կերթամ •

(Մայրը կը պատասխանէր) •

— Աղջիկս, խելքդ գլուխդ • ժողուէ, քեզի ի՞նչ վնաս Պ • Մարթէնի տխմարութենէն կամ շոշորդութենէն • եթէ ամուսինդ ըլլայ՝ շարունակ անոր հետ պետի կենակցիս, գիտես թէ՛ կարգ մը շատ հարուստ մարդ իկ՝ անգամ մը ամուսնանալէ ետքը . . .

Օրիորդը • — Ահա • ես ալ այդ գիտաւորութեամբ ամուսնանալու հաւանութիւն տուի • բայց ինչո՞ւ կ'սպասեցնէ զմեզ . . .

«Հիմա, սիրելի բարեկամներս, անշուշտ կըռահեցիք թէ այս խօսակցութիւնը լսելէս ետքը զանգակը քաշելու տխմարութիւնը չունեցայ, այլ չափազանց ուրախացայ զայն քաշելու ամօթխածութեանս վրայ • ահա այս բանը զիս ազատեց • Սանդուխները չորս չորս ցատկելով վար վազեցի ու հօրաքրոջս իմացուցի թէ չալիտի կրնամ ամուսնանալ, ցաւելով միանգամայն որ ամուսնութեանց նուազման գլխաւոր պատճառներէն մէկըն ալ՝ կարգ մը տիկնանց ու օրիորդաց զայն թակղական վարմունքն է •

Թարգմ.

ԴԱՇՆԱԿ

ՏՊԱՐԱՆ

«Հայեջի»-ի սպարանին մէջ դիրամասցելի գնով կը սպազրուին առեւտրական տնտեսաբան համար ամեն շեղուէ՝ Բարիզեան վերջին դրութեամբ հե-սաբրաւաւարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոփ-րիկ ազդարարութիւններ • կը սպազրուին նաեւ այցելուս, հասցէտուս, հարսանեկան հրախրագիր, մահազդ, նամակագրութիւն, պայտարան, տոմար • եւն •

Ուրիշ ֆաղափներէ եղած յանձնարարութիւնք ալ փութով կը կատարուին •

ԼԵԹԱՅԻՔ

Մահքէմէի ճինայթթտէ •

Իէիս • — Թարիֆ էյլէ պագայըմ, նա՞նըլ չալալիտին օ 400 քիլօլուդ գասայը •

Մազնուն • — Թարիֆ իթմէք պօշ շէյ տիր . . . չիւնքի • սիզ եարամազսընըզ •

Կուռէլիոս աղա՝ իւշ հաֆթատան պէրու խասթա օլան՝ ահպալը Ոնոփրիոս աղայը զիյա-րէթէ կիտէր •

— Կէշմիշ օլա պիրատէր, նա՞նըլսըն պագա-լըմ •

— Աման, սօրմա, հալիմ չօգ ֆէնա •

— Նէ՛ կիպի, նէ՞ օլուեօրսըն •

— Նէ՞ օլաճազըմ, միյտէմ հիշ պիր շէյ գա-պուլ իթմէյօր • սօն տէրէճէ զայըֆըմ, իշէրիմ պուլանըօր, պաշըմ տէօնիւեօր, կէօզլէրիմ գա-րարըօր •

— Է, սօղրա՞ •

— Սօղրա էֆէնտիմ, տիլլէրիմ հիշ թութ-մանօր • աթէշլէր իշինտէ եանըօրըմ • կէճէլէրի կէօզիւմէ ույգու կիրմէյօր • տէրմանըմ եօգ • իշ-թիհամ եօգ • հարարէթտէն աղլըմ թութալ թալասընա տէօնմիւշ • ա՛հ պիրատէր իշթէ հա-լիմ պու մէրքէպտէ • շու հալտէ, րէճա իտէրիմ, պէնի սօրանլարա պէօյլէճէ սէօյլէինիլ •

— Աման պիրատէր • պէն պու պատար մարա-զը հաթըրմտա սաղլաեամամ • եալընըզ, սօրան-լարա՝ «սիլէ էօմիւր, էօլալու» տէր՝ իշինտէն չը-գարըմ, վէսսէլամ •

Կիւզէլ՝ ֆագաթ զայթթլէ ախլէագօըզ պիր գատըն՝ պիր կիւն գօճասընա հիտտէթլէնէրէք տէրքի •

— Ա՛հ, սէն պէնի պիր կիւն քէտէրիմտէն էօլտիւրէճէքսին, էօլտիւրէճէքսին ամա՛ սօնրա պէնիմ էօլիւմիւմ սանա չօգ պահալը օթուրաճագ տըր •

— Ատամ սէն տէ • մէրադ իթմէ՛ նէ զատար պահալըյա օթուրա՛ պիր քէրրէ օթուրուր • պիր տահա թէքրար իթմէզ եա՛ •

Սըճագ պիր եազ կիւնիւ, կիւնէշին պուլութ
արգասընա կիրտիւնի կէօրէն պիր յօճուգ՝ բէ-
տէրինէ. «Պապա, պագ հալա օ գատար սըճագ
քի, կիւնէշ պիլէ սէրինէնմէք իշիւն պուլութուն
արգասընա սագլանըօր» տէմիշ:

Օնպաշընըն պիրի՝ մէյհանէնին պիրինտէ
կիզլիճէ օթուրմուշ չագմադտա իքէն՝ ասկէրի գա-
նունլարըն քէնտիսինի արամագտա օլտուգլա-
րընը կէօրիւպ՝ պիր ֆըշը արգասընտա կիզլէնմէ-
յէ չագալար իսէ տէ՝ եագալը էլէ վէրիպ՝ իրթէ-
սի կիւնիւ եիւզ պաշընըն հուզուրունա կէօթիւ-
րիւրէր:

Եիւզ պաշը. — Նա՛սըլ օլուօր քի ասկէրի
խաֆիյէլէրտէն պիրի սիզի մէյհանէտէ կէօրիւր.
Օնպաշը. — Զիւնքիւ, արգասընտա կիզլէն-
միշ օլտուզում ֆըշը՝ օգատար պէօյիւք տէյիլ
իտի:



ՅԵՄԵՐԻՔ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Պրազիլիա

Տեղւոյս վարժարանաց ուսուցչական մար-
մինը մտմտութե պաշարուեցաւ... արքանը
գումրուտի պէս, որովհետեւ հակառակ իւր փա-
փագանաց՝ հոգաբարձութիւնը որոշեց հրապա-
րակաւ կատարել տալ աշակերտաց տարեկան
հարցաքննութիւնները:

Էկլիզ Սէն Բօլ

Մատմաղէլ Մառի որ կիրակի օրը եկեղեցի-
ին վերնատունը կեցած էր, թաշկինակը գրպա-
նէն հանած ժամանակ հոն պահուած սիրային մէկ
նամակն ալ թաշկինակին ետեէն դուրս ելնելով,
վարը կեցող ժողովուրդին մէջ ինկաւ:

Սուգ էլ աթթարին

Պարոն Զանթիկ՝ երէկ իրիկուն սարոսիւնի
կերպով կռիւի բռնուեցաւ մօրը հետ, որ իրեն
(տղուն) գիշերները դորձածած պըյըխի շորք ա-

նուշագրութեամբ սենեակի աւլուքին հետ աղ-
բանոց նետած էր:

Ծովու բաղնիք

Եիք հագուած միւսիւ մը՝ լողանալէն վեր-
ջը երբ մեկնելու վրայ էր բաղնեպանին «Ատիէօ»
ըսելով, այս վերջինը բարկութեամբ անոր օձիքէն
բռնած՝ «Սանա ատիէօ ամա՛ խալլույա եօգ ա-
տիէօ» ըսաւ ու ձեռքը միւսիւին կրնակը խոթե-
լով հրաշտիառ խայտառակութեամբ դուրս քա-
շեց հոն պահուած խալլում:

Երեւակայել միւսիւին այլակերպութիւնը:

ԾԱԽՈՒ Է

Նամակագրօղջմներու (թէմպուր բօսթ) բաւա-
կան ճոխ հաւաքածոյ մը. Դիմել Տիար Բարսեղ
Թէլլալեանի. Եէրիֆ փաշա փողոյ:

Կը ծախուին նաեւ,	
Կռապաշո Հնդիկները, վէպ	5 շրշ. ողջ
Փիլիի ազբօր հարսնիքը,	15 " "
Այինէի Լէթայիֆ, հայատառ եւ	
Թըքաբառ զուարճալիքներ	4 " "
Դսգանճ գօճա, գօմէտի	20 փրշ.
Մահճուպիլթին Միւքեաֆաթը	20 " "

ԶՈՒԼԱՐԱՆ

ԴՐԻԳՈՐ ՌԱՅԱԷԼԵԱՆ

Թիւ 5 Շարա Ապտիւլ-աղիզ, Դահիլէ

Կը ձուլէ ամեն յեզուէ սպագրական քաւեր,
ծաղիկ, սնքերչիւն եւ կառանքիւր:

Առաջին օրէն իրեն նշանաբան ընտրած է ող-
որթիւն եւ արագութիւն: Իրեն դիմողները միշտ
գոն մնացած են:

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական ամեն ճեսակ գործերու կաշուա-
նիս, փորագրիչ, քէ տուսիս եւ քէ պրիմի վրայ,
կը պատրաստին նաեւ վաճառականական կնիք-
ներ՝ մեծադէ եւ փառլոն:

Աղեքսանդրիա, Ֆրանս փողոց թիւ 22